Է. — *Սուքիաս Կազմող*, 1209 թուին, Հաղբատի մէջ կազմած է Առաքել քահանայի օրինակած վերոգրեալ հատորը. — Սիոն, 1935 էջ 312։

Ը. — *Յակոբ Գրիչ*, 1211ին օրինակած է Աւետարան մը, որուն սրբագրութիւնը կատարած է Մխիթար Հոբայրեցի. Նկարազարդած է Մարգարէ Աբեղայ։ Ստացող՝ Սահակ կրօնաւոր Անեցի։ Ձեռ. Էջմ. թ. 6288. — Սիոն 1934 էջ 110։ Արցախ, էջ 262–3։

Թ. — *Մարգարէ Գրիչ եւ Նշ. Ծաղկող*, 1211ին ծաղկած է Յակոբ Գրչի օրինակած Աւետարանը. — Սիոն, 1934 էջ 110։ 1935 էջ 190։

Ժ. — *Յովհաննէս Կրօնաւոր*, 1243ին օրինակած է Սահմանաց Գիրք մը, Պետրոս վարդապետի ծախքով. — Կար. թ. 1848։ Ձեռ. Էջմ. թ. 1890։ Ման. Յուն., էջ 259։

ԺԱ. — *Պետրոս Կազմող*, 1243ին կազմած է իր գրել տուած Սահմանաց Գիրքը. — Յովս., Մի էջ, 5։ Սիոն 1935 էջ 282։ Ման., Յուն. Դպր., էջ 261։

ԺԲ. — *Յովսէփ Գրիչ*, աշակերտ վարդանայ, 1267ին օրինակած է մէկ Պատարագ Տօնից Տէրունականաց, Տիրացու Գրչի հետ. — Շողակաթ էջ 202։ Հաւուց Թառ էջ 64։

ԺԳ. — *Տիրացու Գրիչ*, 1267ին մասնակցած է վերոյիշեալ գրքի օրինակութեան. — Նոյն, անդ։

ԺԴ. — *Մարտիրոս Գրիչ*, 1417–1437, որդի Խոցադեղի և Սոնդիկի. Հաղբատի մէջ օրինակած է,

1. — Շարակնոց, 1417ին. — Նոտարք, էջ 52։

2. — Շարակնոց, 1437ին. — Նոտարք, էջ 112–3։ Կոն. թ. 47։

ԺԵ. — *Յովհաննէս Քահանայ*, Գրիչ, 1438ին օրինակած է Ճառոց մը. — Նոտարք, էջ 115։ Հայպ. էջ 557։

ԺԶ. — *Գրիգոր Աբեղայ*, Գրիչ, 1455ին օրինակած է Աւետարան մը. — Արցախ, էջ 281 է։

ԺԷ. — *Խաչատուր Աբեղայ*, Գրիչ, որդի Յովհաննէսի և Հաղբէվարդի, 1494ին օրինակած է Շարակնոց մը, Մկրտիչ Դպրի համար. — Ձեռ. Ս. Յ. թ. 1627։

ԺԸ. — *Փիլիպպոս Եպիսկոպոս*, 1498ին օրինակած է մէկ Մաշտոց Ձեռնադրութեան. — Կար. թ. 1055։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՀԻՆ ԷՋԵՐ

ԳՈՎԵՍՏ ՃՇՄԱՐԻՏ ՍԱՂՄՈՍԻՆ[1]

Սաղմոսը մեր մատենագրութեան մէջ շատ գովուած գիրքերէն մին է եղած արդարև։ Ստորև կուտանք քերթողական սճով և նորաբարդ բառերով գրուած Գովեստը, արտագրուած մեր թիւ 265 Ձեռագրէն։ Սաղմոսարան-Ժամագիրք մըն է ան, շահեկան այլևայլ տեսակէտներով։ Ձեռագրիս գլխաւոր յիշատակարանը հրատարակած էինք Սիոնի 1948 տարւոյ Յուլիս-Օգոստոսի թիւին մէջ, էջ 213։ Ներկայիս ի լոյս կ'ընծայենք ուրիշ մըն ալ, որ կը գտնուի ժամագրքի բաժնին վերջաւորութեան (թղ. 242)։

«Ով պատուական ստացաւդք և տեսանաւդք՝ գիտացիք, ի Գորգ վարդապետին աւրինակէն գրեցի, և նա՝ գրեալ էր ի յիշատակարանին, թէ որ ոք յընթեռնուլն զսա՝ այլափոխ բանիցն պատահեսցէ՝ մի՛ տգիտութեան վարկցի կամ անձնահաճութեան, և մի՛ համարձակեսցի յեղաշրջել բան ինչ. զի յաւրինակէ մեկնութեան տեառն Յոսրովու ուղղեցի՝ որչափ զոր դիւրմանէ քննեալն։ Եւ թէ կամիցիս գիտել թէ ոյք են ի նմանէ քննեալքն՝ զտանիցես յանցնիւր տեղւոջ զանունն իւր դրոշմեալ՝ սեագեղով։

Աղաչեմ յիշել զբարեպաշտուհի ստացաւղն և զամենայն զարմն իւր, այլ և ըզգծաւ». — Այսպէս. յաջորդ երեսը պարապ է. ապա կուգան աւետարանական հատուածներ։

Նոյնը կը գտնուի նաև թ. 174 Սաղմոսարանին սկիզբը, էջ 29. — գրուած 1638ին — և կը ներկայացնէ բազմաթիւ տարբերութիւններ, զոր կը նշանակենք, համեմատելով հնագոյն ձեռագրին հետ։

Աստուածատունկս[2] այս՝ հոգեբարոզբոջ[3] բուրաստանս սաղարթափթիթ[4] յոգ-

---

[1] Գովասանութիւն Սաղմոսի, ասացեալ ի սրբոց վարդապետաց։

[2] Աստուածային։

[3] Ձուլի։

digitised by A.R.A.R.@

նապտուղ հոյլ(3) բիւրաբանութեամբ բեղմնաւորեալ, մանաւանդ քնարս բազմայարմար սքողաշուք երկնաւորին հարսինս եկեղեցւոյ, հանուրաստիւ տիեզերագոչ, ոլորտահնչաւղ, ազդարարակ, անմահագործ լցեալ զաւրութեամբ, զոր ամենասուրբ հոգին սատար ի բարձանց ի շրթունս թելադրեալ մարգարէին, միանգամայն և թագաւորին, բոլոր բովանդակ աստուածային պարգևացն, անկեալ(5) անկողոպտելի յարապայծառ մշտազուարթ(6) պատմուճան. Իսկ կոչումն փառաւորութեան անուան սորա՝(7) Սաղմոսարան, որ է նոյնինքն աւրհնութեանց երգարան, ըստ որում բաղձայնէ(8), աւրհնեցէք զտէր յաւրհնութիւն նոր։

Վասնզի սաղմոս(9)՝ սնընդակից է հոգւոյ, զայեակ մտաց, տածումն(10) խորհրդոց, զարգացումն մարմնոյ, աւարտ հասակի, պճնումն դիմաց, զաւրութիւն անդամոց։

Սաղմոս(9)՝ զէն պատերազմողաց, վահանակցութիւն(11) ախոյանից, նիզակակից յաղթողաց, սուսեր անձլելի(12), վատնումն թշնամեաց, հերքումն հակառակորդաց, հէն հատուածելոց։

Սաղմոս(9)՝ պահպանութիւն տանց, ճանապարհ ուղեգնացաց, աւժընդակ վաստակելոց, նաւահանգիստ(3) նաւելոց(3), առաջաստ սարտուցելոց, դղեակ զարհուրելոց, դէտ մոլորելոց։

Սաղմոս(9)՝ ահարկու դիւաց, սարսումն բանսարկուին, պապանձումն ոգեղաւ դաւողացն, ընդդիմակ հակառակորդին յանդգնութեանց։

Սաղմոս(9)՝ գանձարան փարթամաց, ճոխութիւն աղքատաց, ապաշխարութիւն(13) զղջացելոց, ապաշաւ(14) մեղուցելոց, ապաստան յուսացելոց, ապաւէն փախուցելոց։

Սա(9)՝ եկեղեցւոյ զարդ, վարդապետաց դպրութիւն, քահանայական պարուն անծախական սեղան(15), թագաւորաց զովեստ, զաւրաց չահատակիւն, հանդիսացելոց առաջապահեստ, մանկանց դաստիարակ, ծերոց փառք, երիտասարդաց զգաստութիւն(16), կուսանաց պսակ, առաջնորդաց ցուպ, հնազանդելոց համբերութիւն, մեռելոց պատանք, վշտացելոց սփոփանք, առհաւատչեայ հանդերձ յարութեանն յուսոյ։

Սովաւ(17) խաւսք ընդ Աստուծոյ, համարձակութիւն կենաց, պայծառութիւն տաւնից, բերկրումն ժողովրդոց, քակտումն ամպարշտութեան, քանդումն հերձուածողաց, քայքայումն աղանդաւորաց, պարուն նակ հոգեշաւ բազմաձեւալ բովանդակ կենաց մերոց ի պտոյտս(18) անկայիս։

Վասնզի երգ սաղմոսաց ազդեալ ի յոգիս շարժէ առ Աստուած զրոց սիրոյն, և ոչ միայն այս, այլ և ի քարատեսակ սրբոտից արտաւսր արտաքս թորեցուցանէ, ըզհիւանդութիւն բժշկէ, զրոց ցանկութեան չիջուցանէ, զսրտմտութիւն մեռուցանէ, զոխակալութիւն զնստուցանէ, յղկէ զնախանձ, նահանջէ զլեզու, խոնարհեցուցանէ զամբարտաւանութիւն, արիացուցանէ ըզվատութիւն, զանձնիշխանութիւն յաւրինաւորն կապէ սահման, աւետարանական քաղաքավարութեամբ զբովանդակ զկեանս մեր պայծառացուցանէ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւիտենից ամէն, ամէն, ամէն։

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

(4) Սաղարթազարդ սաղմոսարան, տունկ ի հոգւոյն է պտղալի, անուշահամ և հրաշալի։

(5) Անկեալ։

(6) Մշտազուարճ։

(7) Տր։

(8) Բաղդրաձայնէ։

(9) Սաղմոս։

(10) Մտածումն։

(11) Վահան նահատակաց, աւգնական։

(12) Անծալելի։

(13) Ապաշաւ։

(14) Ապաշխարութիւն։

(15) Երգարան։ Սաղմոս։

(16) Զգաւնութիւն։

(17) Սովաւ այս սաղմոսարանաւս՝։

(18) Ի պիտոյս։

digitised by A.R.A.R.@